

ԹՄՄ ԱՐՇԱԿ ՏԻԳՐԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ  
ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ԲԱԺՆԻ  
ՎԿԱՅԱԿԱՆԱՑ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԷՍ  
ՄԻՋՆԱԿԱՐԳԻ ԵՒ ՆԱԽԱԿՐԹԱՐԱՆԻ ԱԽԱՐՏԱԿԱՆՆԵՐՈՒ

Շաբաթ, Յունիս 27ի երեկոյեան ժամը 5:00ին, ԹՄՄ Արշակ Տիգրանեան Վարժարանի Վկայականաց Բաշխման Հանդէսը՝ հովանաւորութեամբ Հոգաբարձութեան Կազմի, տեղի ունեցաւ վարժարանի Ուսլթէր եւ Լորէլ Գարապեան Սրահին մէջ: Հոգ2. Տ. Պարեպ Ծ. Վրդ. Երէցեան կը ներկայացնէր Առաջնորդ Սրբազան Հայրը:

Գործադրուեցաւ վայելուչ յայտագիր մը: Բացման խօսքը կատարեց հանդիսավար Օրիորդ Քաթրին Բոսնոյեան (2003ի շրջանաւարտ): 5րդ դասարանի վկայականներուն բաշխումը կատարեց Օրիորդ Սուլըն Քիմ, իսկ 8րդ դասարանին՝ Պրն. Վաչէ Սեմերճեան: Աւարական դասարաններու վկայականներու բաշխումը կատարեց Պրն. Գրիգոր Սուքիասեան (12րդ դասարանի դաստիարակ): Տեղի ունեցաւ նաեւ 12րդ դասարանի Սրբանակներու Բաշխում: Հրաժեշտի խօսքով հանդէս եկան Յովհաննէս Հէքիմեան եւ Սէրի Երկաթեան: Օրուան գլխաւոր բանախօսն էր Իրաւաբան Արա Ակիշեան՝ Արեւնապետը Հայաստան Համահայկական Հիմնադրամի: Հոգաբարձութեան խօսքը արտասանեց Հոգաբարձութեան Փոխ Արեւնապետը՝ Պրն. Բարսեղ Գարթալեան: Փակման խօսքը կատարեց վարժարանի բազմավաստակ Տնօրէն՝ Տիար Վարդգէս Գուրուեան:

Հայր Պարեպ, կարդաց Առաջնորդ Սրբազան Հօր Ողջոյնի եւ Շնորհաւորական Խօսքը, ուր Սրբազան Հայրը կ'ըսէր. «Փառք կու տանք Բարձրեալն Աստուծոյ, որ Տիգրանեան Վարժարանը յաջողութեամբ կ'աւարտէ իր ուսումնական տարին՝ հաստատականութեամբ եւ նորանոր յաջողութիւններով, միշտ մնալով հաւատարիմ իր կրթական, հոգեւոր-ազգային դաստիարակչական առաքելութեան մէջ: Ուրախ ենք հաստատելու, թէ վարժարանի կրթական յաջողութիւնները կը պարտինք բազմավաստակ Տնօրէն՝ Տիար Վարդգէս Գուրուեանին, Հոգաբարձութեան, Խնամակալ Մարմնին եւ անոր Արեւնապետը՝ Տիար Ճորճ Մանտոսեանին, Ուսուցչական Կազմին եւ անձնուէր ծնողներուն: Ամալերջի հանդէսի առթիւ ի սրտէ կը շնորհաւորենք Տիգրանեան Վարժարանի Երկրորդական Բաժնի, Միջնակարգի եւ Նախակրթարանի բոլոր շրջանաւարտները, իրենց ծնողներն ու հարազատները:

«Երախտագիտական ոգիով կ'աղօթենք Վարժարանի Բարերար՝ Արշակ Տիգրանեանի հոգիի խաղաղութեան համար, նոյնպէս կ'աղօթենք իր Տիկնոջ՝ Էլիանոր Տիգրանեանի քաջառողջութեան եւ արեւշարութեան համար: Թող Աստուած օրինէ Տիգրանեան Վարժարանը իր բոլոր պատասխանատուներով, ուսանողներով եւ անոնց ծնողներով»:

Հայր Սուրբի «Պահպանիչ» օրհնութեան աղօթքով փակուեցաւ յայտագիրը: